ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
04.02.2025թ. ԿՆՔՎԱԾ N PDU-134-01-25 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «22» դեկտեմբեր 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ն, ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, 04.02.2025թ. կնքված N PDU-134-01-25 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր»), 8.5 կետով՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 3.3 կետում 1-ի նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն պայմանագրի ընդհանուր գինը սահմանվում է 4,350,000 (չորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:»:

1.2. Պայմանագրի Հավելված 7-ով հաստատված վճարման ժամանակացույցում «դեկտեմբեր» և «Ընդամենը» սյունակներում «4,100,000» թվերը փոխարինել «4,350,000» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն ք. Երևան, Մ. Ադամյան 1 ՀՎՀՀ՝ 02629081 Հ/Հ՝ 900011018539 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՖՆ գլխավոր քարտուղար՝ _____ Հ. Հարությունյան /ստորագրություն/ Կ.Տ.	«Հայփոստ» ՓԲԸ ք. Երևան, Արշակունյաց 65/5 ՀՎՀՀ 02507464 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ h/h 1930003703156000 Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար _____ Գ. Բաղդասարյան (ստորագրություն) Կ.Տ.